ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

VII Բ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ»-Ի

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII Բ դասարանի աշակերտների հետ՝ թվով 17 հոգի, ապրիլի 8-ից մինչև մայիսի 13-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ «Նախագծային աշխատանք» հայոց լեզվից «Գեղաշենի պատմությունը» թեմայի շուրջ:

Մեր նպատակն էր՝ նորովի ներկայացնել Գեղաշենի 200-ամյա պատմությունը՝ նրա հիմնադրման, անվանումների ծագման բացատրությունները, թարմացնել և ավելացնել վերջին տասնամյակներին կատարված փոփոխությունները, դրանք ներկայացնել նոր ժամանակների շնչով և նոր չափորոշիչներով՝

Ա. ՀԵՆՎԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԻՆ
Բ. ԱՊՐԵԼՈՎ ՆԵՐԿԱՅՈՒՄ
Գ. ՆԱՅԵԼՈՎ ԱՊԱԳԱՅԻՆ:

Այդ նպատակով կատարել ենք հետևյալ աշխատանքները.

- նպատակային շրջայցեր գյուղի տարբեր վայրեր,
- այցելել մարդկանց, լսել գյուղի անցյալի ու ներկայի մասին պատմություններ,
- կատարել նկարահանումներ տարբեր վայրերում,
- ստեղծել տեսասահիկ, ֆիլմ, գիրք-ալբոմ, տարբերանշաններ,
- սովորել երգ, բանաստեղծություն ու պար,
- ներկայացնել վերջնարդյունք՝ ֆիլմ, գիրք-ալբոմ և այլն:

Աշխատանքին մասնակցող յուրաքանչյուր աշակերտ ներկայացրել է իրեն տրված հանձնարարությունը ունեցած կարողությունների և բացահայտված նոր հմտությունների չափանիշով:

Կարևոր հանգամանք էր նաև յուրաքանչյուր աշակերտի կողմից կատարված ուսումնասիրության, գրառված փաստերի հավաստիությունը ներկայացնելը ու արված վերլուծական աշխատանքը, որոնց շնորհիվ էլ զարգացվում, բացահայտվում են ձեռք բերած հմտությունները:

Նախագծային աշխատանքն իրականացնելու և ավարտին հասցնելու համար նախօրոք որոշվեց վերջնաժամկետը՝ մայիսի 13-ը:

Աշխատանքը սկսելուց առաջ նախ անհրաժեշտ էր ծանոթանալ եղած գրավոր աղբյուրներին ու բանավոր զրույցներին:

Նախապես 17 հոգին ընտրեցին իրենց ավագ՝ Ավետ Եղիազարյանին, իրենք կամավորության սկզբունքով բաժանվեցին չորս խմբերի՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկվեցին 4-5 աշակերտ և ստացան հանձնարարություն.

Ա. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

1. Եղիազարյան Ավետ
2. Թումանյան Արթուր
3. Կարապետյան Կարինե
4. Համբարձումյան Սոնա
5. Նավասարդյան Շավարշ

Հավաքել նյութեր՝

1. գյուղի տեղավայրի, հիմնադրման և անվանումների մասին.
   1. Փայչախլու բերդ-ամրոց
   2. Բալիջա
   3. Ծատուրաշեն

բակել նոր գիրք գյուղի հիմնադրման 200-ամյակի տարում՝ 2028 թվականին, որովհետև հենց իրենք են լինելու 12-րդ ավարտական դասարանի սաները ու պիտի այդ հոբելյանական տարում գեղաշենցու սեղանին դնեն գյուղի պատմության 2-րդ գիրքը՝ «Գեղաշենի թարմացված պատմությունը» խորագրով:

Ես, լինելով իրենց «Նախագծային աշխատանք»-ի ղեկավարը, ուղղորդել եմ նրանց, հետևել աշխատանքների ընթացքին, փորձել ապահովել գրքերով, հանրագիտարաններով, ծանոթացնել գյուղի անվանի մարդկանց հետ, այցելել նշված վայրերը՝ աշխատանքները ժամանակին կատարելու և ավարտին հասցնելու նպատակով: Գոհ եմ կատարած հետազոտական աշխատանքից ու բոլորին էլ գնահատել եմ «9»՝ ըստ ներկայացրած վերջնարդյունքի:

Ուսուցչուհի՝ Գոհար Ղազարյան

4. Ծատուրավան
5. Մեղրավան
6. Ճաթկռան
7. Հրազդան
8. Գեղաշեն

2. համայնքի կարևոր կառույցների մասին.
   ա.առևտրի կետեր՝ խանութներ՝ մթերային, շինարարական, դիզվառելիքի
   բ. հանքավայրեր (ավազի ու քարի)
   գ. արտադրական օբյեկտներ՝ («Օրիգինալ»՝ սուրճ և «Օրիգինալ»՝ շինություններ, պաների ու լիմոնադի արտադրամասեր, հացի փռեր և այլն),
   դ. կենցաղ-սպասարկման կետեր (վարսավիրանոց, գեղեցկության սրահ)
3. Շրջակա աշխարհագրական վայրեր (Գեղամա լեռներ, Աժդահակ լեռնագագաթ, Ակնա լիճ, Օձաքար, եկեղեցի, մատուռներ)
4. Առողջապահության կենտրոն
5. Տրանսպորտի գործունեություն և այլն:

Բ. ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՆԿԱՐԱՀԱՆՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

1. Ուսումնասիրել գեղաշենցիների զբաղմունքն ու կենցաղը
   Ա. գյուղատնտեսություն
   Բ. անասնապահություն
   Գ. մեղվաբուծություն
   Դ. տուրիզմ
   Ե. կենդանական և բուսական աշխարհը
2. Հանդիպում արցախյան պատերազմների մասնակիցների հետ
3. Այցելություն հերոսների շիրիմներին
4. Գյուղապետարան-համայնքապետարանի գործունեությունը
5. Նկարահանել կարևոր իրադարձություններ, դեպքեր, հետաքրքիր պատմություններ, վայրեր
6. Վարել հարցազրույց

1.Հովհաննիսյան	Անգելինա
2.Մարտիրոսյան	Սուրեն
3.Մարտիրոսյան	Քրիստինե
4.Նավասարդյան	Ավետիք

Գ. ԳԻՏԱԿՆԵՐԻ ԽՈՒՄԲ
ՀԱՅՏՆԻ ԵՎ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏՔԵՐՈՎ

Ուսումնասիրել կրթական և մշակութային օջախների գործունեությունը

1. Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 112-ամյա պատմությունը:

1. Հայրապետյան	Սարգիս
2. Ղազարյան	Աիդա
2. Պետրոսյան	Ալինա
4. Պողոսյան	Միրակ

2. Մշակույթի տուն (երաժշտական դպրոց, պարային և սպորտային խմբեր)
3. «Հեքիաթ» մանկապարտեզ
4. Նախակրթարան
5. Ստեղծագործող գեղաշենցիներ

Ա. Եփրեմ	Սարգսյան

Բ. Գագիկ	Հարությունյան
Գ. Սևակ	Հովհաննիսյան
Դ. Վանիկ	(Վահե) Գալստյան
Ե. Սուրեն	Ղազարյան
Զ. Ռշտունի	Վարդանյան
Է. Սիմակ	Գալստյան
Ը. Աշխարհաբեկ	Մեհրաբյան
Թ. Գոհար	Ղազարյան
Ժ. Լևոն	Գալստյան

6. Գործարարներ, բարերարներ

Ա. Վաչագան Ղազարյան (դեղագործություն, «ԱՐՓԻՄԵԴ» ՍՊՀ)

Բ. Մարտիկ Անդրեասյան («ՕՐԻԳԻՆԱԼ» սուրճ և շինանյութ)

Գ. Հայկ Ստեփանյան(ՀՀ ԱԱԾ)

Դ. Կարապետ Պողոսյան (Շինարար. գործունեություն)

Ե. Արծրուն Քոչարյան (ՀՀ ԱԱԾ)

Զ. Տիգրան Սիմոնյան (Տուրիզմ)

Է Աղասի Գրիգորյան (Հյութեր արտադրող)

Ը. ...

Դ. ԽՄԲԱԳԻՐ-ՁԵՎԱՎՈՐՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

1. Քննարկել՝ հավաքած տեղեկությունների, լուսանկարների, նկարահանված տեսանյութերի, զրույցների ճշմարտացիությունը, հավաստիությունը, արդիականությունը և այլն
2. խմբագրել հավաքած նյութերն ու տեղեկությունները
3. դասակարգել՝ ըստ բնագավառների
4. պատրաստել խորհրդանիշեր
5. գրել բանաստեղծություն
6. ստեղծել երաժշտություն
7. բեմադրել պար
8. կազմել գրքույկ
9. տեսասահիկ
10. ստեղծել ցուցասրահ
11. ֆիլմ

1. Հովհաննիսյան	Էլինար
2. Ղազարյան	Գոռ
3. Մկրտչյան	Աննա
4. Սիմոնյան	Մարտին

Նախագծային աշխատանքը ներկայացնելուց հետո ծավալվեց քննարկում, մտքերի փոխանակում, որի ընթացքում ուսուցիչների և աշակերտների կողմից հնչեցին հետաքրքիր առաջարկներ և գնահատականներ կատարված աշխատանքի վերաբերյալ:

7-րդ ^բ դասարանի աշակերտների կատարած նախագծային աշխատանքն արժանացավ տնօրենության բարձր գնահատականին և որոշվեց այն դարձնել շարունակելի:

Մասնակիցները խոստացան ղեկավար Գոհար Ղազարյանի հետ ստեղծել գյուղի պատմության մասին 2-րդ գիրքը: Հավաքած բոլոր նյութերի, նկարահան-ված տեսաժապավենների և տարբեր հավաքածուների հանրագումարում հրատա-

«ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ»-Ի ԳՆԱՀԱՏՈՒՄ

7-ՐԴ Բ ԴԱՍԱՐԱՆ, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՄԱ՝ «ԳԵՂԱՇԵՆԻ ԹԱՐՄԱՑՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ ԳՈՀԱՐ ՂԱՉԱՐՅԱՆ

7-րդ Բ դասարանի աշակերտների ընտրած «ԳԵՂԱՇԵՆԻ ԹԱՐՄԱՑՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» թեման բավականին ծանրակշիռ ու լայնածավալ, խոր ու մանրամասն ուսումնասիրություն պահանջող աշխատանք է ներկայացնում՝ ընդգրկելով երկար ժամանակահատվածի պատմությունը՝ գյուղի հիմնադրումը, անունների ծագումը, անվանափոխությունները: Կատարվել է երկար, մանրակրկիտ, հանգամանալից ուսումնասիրություն՝ հենվելով հավաստի ու ճշգրտված փաստերի հիման վրա:

Մասնակիցները խորությամբ ծանոթացան գյուղի կենսագրությանը՝ կարդալով եղած գրավոր աղբյուրները և լսելով տարեց մարդկանց զրույցները:

Հավաքեցին կարևոր փաստեր, տվյալներ, այցելեցին տարբեր բնակատեղիներ, որտեղ ժամանակին հանգրվանել ու ապրել են մեր նախնիները: Եղան առաջին բնակավայր Բալիջայում, տեսան և ուսումնասիրեցին նրա տարածքը, Փայչախլու բերդ-ամրոցի, Ծատուրաշենի ավերակները և ականատեսի աչքերով ու տեսածի հիման վրա ներկայացրին կատարած աշխատանքը՝ վերջնարդյունքի տեսքով, այն է՝ տեսասահիկ, ֆիլմ և գիրք-ալբոմ:

Յուրաքանչյուր խումբ, ստանալով կոնկրետ հանձնարարություն, զբաղվեց իր աշխատանքով: Գրեցին ու արտասանեցին բանաստեղծություններ, երգեցին գյուղի մասին նոր գրված երգը՝ «Գեղաշեն» վերնագրով:

Աշխատանքի սկզբում գյուղի մուտքի մոտ ներկայացրին գրական-երաժշտական փոքրիկ միջոցառում՝ նվիրված գյուղի պատմությանը:

Վերջնարդյունքում ստացված տեսաֆիլմը հագեցած էր ասմունքով, երաժշտական կատարումներով, պարով:

Պատրաստեցին հետաքրքիր խորհրդանշան՝ ձևավորված իրենց՝ աշակերտների մտահղացումներով՝ գյուղի մուտքապատը՝ դիմացը խմբի աշակերտները:

Նախագծային աշխատանքի ավարտի օրը հանգամանալից ներկայացրին աշխատանքները: Յուրաքանչյուր խումբ հաշվետվություն ներկայացրեց կատարածի մասին, որից հետո պատասխանեցին իրենց ուղղված հարցերին՝ ցուցաբերելով հստակ իմացություն, տիրապետելով բոլոր նյութերի հավաքման պատմությանը, ուսումնասիրությունների մանրամասներին:

Կատարված հետազոտական աշխատանքն աչքի է ընկնում պատմական ժամանակաշրջանի ընկալման խորությամբ, որի մեկնաբանման ընթացքում ի հայտ եկան մասնակիցների հմտությունների նոր բացահայտումներ:

Հետազոտությունը կատարված էր մանրակրկիտ և հանձնարարվածից ավելի նյութ ներկայացվեց լսարանին ու արժանացավ գովեստի խոսքերի: Արդյունքում բոլորը ստացան 9 գնահատական:

7-ՐԴ Բ ԴԱՍԱՐԱՆԻ «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ»-Ի ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԹԻՎ	ՉԱՓԱՆԻՇ	ԳՆԱՀԱՏՈՒՄ - ԳԵՐԱԶԱՆՑ
1.	ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄ	1.Պատմական ժամանակաշրջանի խոր ու մանրամասն ուսումնասիրմամբ ներկայացվում է գյուղի հիմնադրման պատմությունը 2.Հետազոտությունները կատարված են մանրակրկիտ, հանգամանալից, հավաստի ու ճշգրտված փաստերի հիման վրա:
2.	ՀԱՐՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	1.Ներկայացումը հիմնականում կենտրոնացած է հետազոտության նյութի վրա 2.Ցուցադրում է բարձր մակարդակի տեղեկացվածություն գյուղում կատարված դեպքերի ու զարգացման վերաբերյալ 3.Ընդծված են հետազոտողների վերլուծական կարողությունները:
3.	ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1.Ներկայացումն ինքնատիպ է, յուրօրինակ, որովհետև այն չի կրկնում կատարված նախագծային որևէ աշխատանքի 2.Հավաքած փաստերն և տեղեկությունները հետաքրքիր տարբերակներով ու բացատրություններով են մեկնաբանվում 3.Բանախոսներն արձագանքում են լսարանի առաջ քաշած հարցերին ու տալիս ճիշտ և սպառիչ պատասխան:
4.	ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ	1.Ֆիլմ-ներկայացումը ներառում է թեմային համապատասխան ցուցադրական նյութեր՝ նկարահանված համապատասխան վայրերում ու մարդկանց հետ հանդիպումների ժամանակ 2.Զեկուցողները բացատրում են յուրաքանչյուր տեղանվան ծագումն ու բացատրությունը, բանավոր ու գրավոր աղբյուրներից քաղված հետաքրքիր փաստերը՝ մատնանշելով հեղինակին
5.	ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1.Ներկայացնողները պատմում են հստակ ու գեղեցիկ հայերենով, ներկայացնում յուրաքանչյուր տեղանվան շուրջ հյուսված պատմությունը, որով գրավում են ամբողջ լսարանի ուշադրությունը 2.Ցուցադրված նյութերն ու տերմինների բացատրությունը ներկայացվում են գեղեցիկ սահիկաշարով, բովանդակալից նյութերով: